Հայտարարվում է մրցույթ՝ <<ՀՀ Արարատի մարզի Արևաբույրի Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի քիմիայի /10 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:
Ուսուցչի պաշտոնի համր նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /Ձև 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև ապրիլի 8-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա ապրիլի 11-ին՝ ժամը 15:00-ին, Արարատի մարզի Արևաբույրի Հրաչյա Թադևոսյանի անվան միջնակարգ դպրոցում:
Հասցեն՝ գ. Արևաբույր, Հր. Թադևոսյան փողոց:
Տեղեկությունների համար զանգահարել՝ 093-093-885, 095-939-090 հեռախոսահամարով: